

25.05

4342



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարարի  
պարտականությունները կատարող



*[Handwritten signature]*

Արամ Մեյմարյան

«20» 05 2026թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 06 4 - 26

Նախաձեռնող՝

«ԳՐԵՅ ԲԱԶԱՆՏ» ՍՊԸ

Երևան, Շենգավիթ, Բազրապուրոնյաց փ., 14, 64

Գործունեությունը՝

Ոչ մեդաղական օգտակար հանածոյի արդյունահանում  
Շիրակի մարզ, Անի համայնք, Քարաբերդ բնակավայր

Առդիր՝ 5 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**  
**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

ԲՓ № 064 - 26

«20» 05 2026թ.

**Մարալիկի (Քարաբերդի) պիրոքսենային անդեզիտի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Ձեռնարկող՝

«ԳՐԵՅ ԲԱԶԱԼՏ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Ա կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Շիրակի մարզ, Անի համայնք, Քարաբերդ բնակավայր

**Ներածական մաս.** Մարալիկի պիրոքսենային անդեզիտի հանքավայրը գտնվում է Շիրակի մարզի Անի համայնքի Քարաբերդ բնակավայրի վարչական տարածքում, Քարաբերդ բնակավայրից մոտ 0.4 կմ հարավ-հարավ-արևմուտք, Ձիթհանքով և Լանջիկ բնակավայրերից 3.3 կմ հեռավորությունների վրա:

Հայցվող տարածքի հողերը ներկայացված են գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրերով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի թ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Նախատեսվող գործունեության նպատակն է իրականացնել պիրոքսենային անդեզիտի արդյունահանում:

Հանքավայրի պաշարները հաստատվել են 26.02.1982 թ-ին Հայկական ՍՍՀ ՊՏՀ-ի կողմից թիվ 257 արձանագրությամբ՝ 712.2 հազ.մ<sup>3</sup> քանակով, ըստ B կարգի:

Հանքավայրի պաշարների մնացորդը 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ, համաձայն 1996թ-ի ՕՀՊՊՀ-ի տվյալների, կազմում է՝ 665.0 հազ.մ<sup>3</sup>:

Հանքավայրի շահագործումը նախատեսվում է իրականացնել բաց եղանակով միակողմանի վերևից-ներքև խորացող մշակման համակարգով, մակաբացման ապարները արտաքին լցակույտեր տեղափոխելով:





Մակաբացման ապարների լցակույտի հիմքի զբաղեցրած մակերեսը կազմելու է 0.6 հա, բարձրությունը՝ 5մ, շեպի թեքման անկյունը՝ 30-35°, հողաբուսական շերտի լցակույտի զբաղեցրած տարածքը՝ 0.13 հա, բարձրությունը՝ 4 մ:

Հայցվող տեղամասի և դրան հարակից տարածքներում ԽՍՀՄ տարիներին իրականացվել է օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ:

Բացահանքի շահագործման աշխատանքների ավարտին նախատեսվում է կատարել բացահանքի մշակված տարածքի, արտաքին լցակույտերի, արտադրական հրապարակի, մոտեցող ավտոճանապարհի լեռնատեխնիկական ռեկուլտիվացիա՝ 3.0 հա ընդհանուր մակերեսով: Ռեկուլտիվացիայի համար նախատեսվում է մասնահանել 1280.2 հազ ՀՀ դրամ, ռեկուլտիվացիայի կենսաբանական փուլի համար 1614.7 հազ ՀՀ դրամ:

Բացահանքի ջրամատակարարումը տեխնիկական ջրով իրականացվելու է ջրցան-լվացող ավտոմեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ջրի ցիստեռնով:

Գրունտային ջրերը բացահանքի տարածքում բացակայում են, իսկ անձրևաջրերը կհեռանան ներծծման և բնական գոլորշիացման եղանակով:

Կենցաղային կեղտաջրերը՝ օրեկան 0.27 մ<sup>3</sup> լցվելու են բետոնային լցարան, որտեղից պարբերաբար տեղափոխվելու են:

Հայցվող տարածքի ծայրակետային կոորդինատներն են ARM WGS-84 համակարգով

|    | X          | Y          |
|----|------------|------------|
| 1  | 4490000.90 | 8401805.25 |
| 2  | 4490121.78 | 8401777.13 |
| 3  | 4490118.63 | 8401756.22 |
| 4  | 4490162.27 | 8401783.05 |
| 5  | 4490218.26 | 8401797.20 |
| 6  | 4490112.00 | 8401880.00 |
| 7  | 4490105.00 | 8401873.00 |
| 8  | 4490098.00 | 8401872.00 |
| 9  | 4490089.00 | 8401880.00 |
| 10 | 4490081.00 | 8401882.00 |
| 11 | 4490079.00 | 8401887.00 |
| 12 | 4490083.00 | 8401900.00 |
| 13 | 4490068.00 | 8401910.00 |
| 14 | 4490052.00 | 8401918.00 |
| 15 | 4490042.00 | 8401913.00 |

Ըստ հաշվետվությունում եղած տեղեկատվության՝ հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, պատմության, բնության հուշարձաններ առկա չեն:

**Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.**

-լեռնային տեխնիկայի և ավտոինքնաթափերը համալրված էլին են կատալիտիկ չեզոքացուցիչներով, որոնք թույլ կտան կրճատել գազերի արտանետումները մթնոլորտ,



- փոշենստեցման նպատակով տարվա չոր և շոգ եղանակին նախատեսվում է կատարել ջրցան՝ օրական 3 անգամ,
  - թափոնները պարբերաբար դուրս է բերվելու բացահանքի տարածքից և տեղադրվելու է հատուկ նախատեսված հարթակներում կամ վաճառվելու է,
  - տեխնիկատրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում՝ բացառելու համար վառելիքի և յուղերի արտահոսքը և ենթարկվեն պլանային տեխնիկական ստուգումների,
  - բացառվելու է տեխնիկատրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից ու արտադրական տարածքներից դուրս,
  - աղմուկի ազդեցությունը կանխելու նպատակով մշակվելու է ժամանակացույց, բացառվելու է գիշերային աշխատանքը հանքավայրի տարածքում,
  - հնարավորինս պետք է խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից
  - օգտագործված յուղերը և քսայուղերը որպես վտանգավոր թափոն, հավաքվելու են առանձին տարաների մեջ և օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնվելու են լիցենզավորված ընկերություններին յուղերի և քսայուղերի երկրորդական վերամշակման նպատակով,
- Աշխատանքների իրականացման ընթացքում ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդի որակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ,
- հողային ծածկույթի մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ,
- մակերևութային ջրերի մշտադիտարկումներ՝ շաբաթական մեկ անգամ,
- աղմուկի մակարդակի չափումներ՝ տարեկան մեկ անգամ,
- կենսաբազմազանության մշտադիտարկումներ՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակի, աճելավայրերի և ապրելավայրերի տարածքի, պոպուլյացիայի փոփոխության՝ տարեկան մեկ անգամ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 200.0 հազ. ՀՀ դրամ:

**Պատճառաբանական մաս.** Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Մարալիկի (Քարաբերդի) պիրոքսենային անդեզիտի արդյունահանման աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային լսումներ Շիրակի մարզի Անի համայնքի Քարաբերդ բնակավայրում, որոնց ընթացքում մասնակիցները հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Շիրակի մարզպետարանը, Անիի համայնքապետարանը: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և բնապահպանական միջոցառումների իրականացման արդյունքում կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:



## Փորձաքննական պահանջներ

- Աշխատանքների իրականացման ընթացքում պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները Կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:
- Աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
- Ջարդիչ տեսակավորող կայան նախատեսելու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:
- Աշխատանքների իրականացման գործընթացում ներգրավել ազդակիր բնակավայրի բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

## ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ԳՐԵՅ ԲԱԶԱԼՏ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության Մարալիկի (Քարաբերդի) պիրոքսենային անդեզիտի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Գոհար Մինասյան